# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Նոյեմբերյան, Երևանյան 4, Հեռ. /0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

N Ե-01/2289
*14 սեպտեմբեր 2023թ.*

**«ԱՎԳՈՄԵ ՇԻՆ» ՍՊԸ**
**ՏՆՕՐԵՆ ԻՇԽԱՆ ԱՎԱԳՅԱՆԻՆ**

## ԾԱՆՈՒՑՈՒՄ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ /ԼՐԻՎ/ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նոյեմբերյանի համայնքապետարանի և "ԱՎԳՈՄԵ ՇԻՆ" ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 24.07.2023թ. կնքված "ՀՀՏՄՆՀՀ-ԳՀԱՊՁԲ-23/05" ծածկագրով Նոյեմբերյանի համայնքապետարանի կարիքների համար ապրանքի մատակակարարման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և ՀՀՏՄՆՀՀ-ԳՀԱՊՁԲ-23/05 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

ՀՀ օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:», իսկ ՀՀ օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:»

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ «Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը. Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում. բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են:» Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում վաճառողի կողմից չի մատակարարվել: ՀՀ օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:»
Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի և 2-րդ մասի համաձայն՝ Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի Առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՐՄԵՆ ԱՂԱԲԱԲՅԱՆ**

*Կապ. Առաջատար մասնագետ*
*Լ. Ղուլիջանյան*
*+37477150134*